ՏԵՂԵԿԱՆՔ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1 «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-196 օրենքի (այսուհետև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել «լ» կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «լ) սպորտի կառավարման տեղեկատվական համակարգ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված համակարգ, որը ստեղծված է սպորտային գործունեության կառավարման, կազմակերպման, վերլուծության և տվյալների պահպանման նպատակով: Այն ապահովում է տվյալների ավտոմատացված հավաքագրումը, մշակումը, պահպանումը:»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը «ժ.9» կետից հետո լրացնել «ժ.10» և «ժ.11» կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ժ.10) սահմանում է սպորտի կառավարման տեղեկատվական համակարգի վարման կարգը.

ժ.11) մշակում, ներդնում և վարում է սպորտի ոլորտի պետական վարչական ռեգիստրները.»:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել 2-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «Սպորտի կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծման և վարման լիազոր մարմին է սահմանվում Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազոր մարմինը:»:

Հոդված ~~3.~~ **4.** Սույն օրենքի 2-րդ հոդվածից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ քառամսյա ժամկետում:

Հոդված ~~4.~~ **5**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: